ՆՈՐ-ԴԱՐ

№ 106 ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ Չորեքշաբթի 27 Յունիսի 1884 Չորեքշաբթի 27 Յունիսի ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 106

Տարեկան 10 ռուբլի. վեց ամիսը՝ 6 ռուբլի. երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Համարը՝ 5 կոպէկ:
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով:
Յայտարարութեան մի տողը արժէ 2 կ. ընկերութիւնների համար՝ կրկնապատիկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.— Ս. Էջմիածնի ճեմարանը:
Քրօնիկօն.—Այս և այլք:—Մի պատասխան:
Քաղաքական.—Լուրեր.
Խառն Լուրեր:—Հեռագիրներ — Յայտարարութիւններ—Բանասիրական.— Ենան:—Մի անցք:

«Նոր-Դար»-ին բաժանորդ գրուել կարելի է կէս տարով՝ յուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի վերջը: ԿԷՍ ՏԱՐՈՒԱՅ բաժանորդագինն է —6 ՌՈՒԲԼԻ: Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція „Норъ-Даръ“.

Խնդրում ենք հասցնել «Նոր-Դար»-ի խմբագրութեան—ապառիկ մնացած բաժանորդագները:

«Նոր-Դար»-ի խմբագրութիւնը իւր նախկին բնակարանից տեղափոխուել է, փոքր ինչ ցածր՝ ԲԱԶԱՐՆԱՅԱ փողոց, Իշխանուհի Էրիստովի տունը, № 20.

Թիֆլիս, 26 յունիսի 1884

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՃԵՄԱՐԱՆԸ

Հանգուցեալ Գէորգ Դ-ի մահուանից յետոյ մեր ժողովրդի լուսաւորութեամբ հետաքրքրւող իւրաքանչիւր հայ մի տեսակ երկիւղով ինքն իրեն հարց էր առաջարկում. արդեօք ինչ պիտի դառնայ ճեմարանի գործը: Եւ այդ հարցի պատասխանը լինում էր սովորաբար անորոշ և յուսահատական:

Ճեմարանի բարեկամներն այն ժամանակ միայն սկսան ազատ շունչ քաշել և նոր յոյսերով ապրել, երբ Տեղապահ Մակար արքեպիսկոպոսը Բեսարաբիայից գալով իւր պաշտօնատեղին—ս. Էջմիածին գնալու համար, Թիֆլիսի վանքի մայր եկեղեցիի բեմից հրաւիրեց հայ ժողովուրդը պահպանել ճեմարանը—՚ի տէր հանգուցեալ կաթողիկոսի աւանդը:

Այն ժամանակից մենք ճեմարանի գործը ապահովուած համարեցինք. հասկացանք, որ ամեն. Տեղապահ Մակարը նրա հետ և ս. Էջմիածնի միաբանութիւնը կամենում է պահպանել ճեմարանը մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնը:

Յետոյ, ՚ի հարկէ, նորընտիր կաթողիկոսի տնօրինութեամբ կը մնար իւր նախորդից աւանդած ճեմարանը:

Այն ժամանակից շատ և շատ ամիսներ բոլորուեցան, թէպէտև մինչև օրս էլ Մայր Աթոռը թափուր է մնում, բայց և այնպէս ճեմարանը կանգուն մնաց և շատ կասկածներ փարատուեցան:

Վերջին ժամանակներս մեզ հասած լուրերը աւելի յուսադրում էին ճեմարանի ապագայի վերաբերութեամբ:

Մենք իմացանք, որ ՚ի տէր հանգուցեալ կաթողիկոսը իւր մահուանից առաջ մի առանձին կոնդակով իւր հիմնած ճեմարանի և Թանգարանի պահպանութիւնը յանձնարարել է Մակար արքեպիսկոպոսին: Այդ հասկանալի էր և սպասելի, որովհետև վերջին կաթողիկոսները, ինչպէս և Ներսէս Աշտարակեցին իրենց սրտին մօտիկ նշանաւոր գործերի կատարումը և պահպանութիւնը յանձնել են միշտ Մակար Սրբազանին:

Մենք իմացանք նոյնպէս, որ Տեղապահ Մակարը իւր ձեռքն է առել ճեմարանի գործը և նրան իւր առանձին հոգացողութեան առարկան է դարձրել:

Ս. Սինոդը Տեղապահի նախագահութեամբ առաջիկայ դպրոցական շրջանի համար ամեն հարկաւոր կարգադրութիւններն արել էր. արդէն յայտնի ուսուցչական խումբը կրկին հրաւիրուել էր դասաւանդութիւնը շարունակելու ճեմարանում իւր նախկին տեսչի առաջնորդութեամբ: Լուծուել էր և այն խնդիրը, որ բաւականին ժամանակ մամուլի և հասարակութիւնների մէջ վիճաբանութիւնների առարկայ էր դարձել և շատ կողմից էլ դժգոհութիւն էր յարուցանում. ս. Սինոդի և ուսուցչական խմբի մէջ համաձայնութեամբ վերջինների ռոճիկները պակասացրել էին, և ինչպէս մեզ յայտնել էին, ուսուցչական խումբը ս. Սինոդի սպասածից աւելի զիջողութիւն է արել ռոճիկների մասին:

Այսպէս մենք ճեմարանի գործը լիովին ապահոված էինք համարում մինչև նոր կաթողիկոսի հաստատուիլը, երբ վերջերումս («Նոր-Դար» № 103) ս. Էջմիածնից ստացած մի հեռագիր այդ ամենը փոխեց և կրկին մեզ տարակուսանքների մէջ ձգեց: Զարմանալին էլ այն էր, որ այդ կատարուեցաւ Տեղապահի բացակայութեան ժամանակ:

Մեր ստացած հեռագիրը, որի ճշտութեան վերայ կարելի չէ տարակուսել, հաղորդում էր, որ ս. Սինոդի նախագահ Մկրտիչ սրբազանի պահանջման համաձայն՝ ճեմարանի տեսուչ Արշակ Նահապետեանը իւր հրաժարականն է տուել:

Ճեմարանի գործերին մօտիկ ծանօթը հասկանում է թէ ինչ է նշանակում տեսչի հրաժարականը:

Երբ տեսուչը չ՚կայ, կը նշանակէ, որ ուսուցչական խումբն էլ չ՚կայ: Որովհետև ուսուցչական խումբը կազմուելուց առաջ նրան պէտք է նախ յայտնի լինի թէ ո՛վ է տեսուչը:

Այժմս ս. Սինոդին է մնում գործը այնպէս վարելու, որ մեր տխուր գործերի թւում մէկն էլ չ՚աւելանայ:

Ս. Սինոդին յայտնի պէտք է լինի, որ ընդհանուր տրամադրութիւնը ճեմարանի կանգուն մնալու կողմն է:

Ս. Ս.

ՔՐՕՆԻԿՕՆ

„Новости“-ին հաղորդում են, որ Պետերբուրգի քաղաքագլուխ՝ գեներալ-լէյտենանտ Գրեսսերը առանձին ուշադրութիւն է դարձրել ոչնչացնել մայրաքաղաքում արմատացած այն անառակութիւնը, որը, ինչպէս երևեցաւ, խոր արմատներ է ձգել վերջին ժամանակներս քաղաքի մէջ, շնորհիւ այն բոլոր պոռնկատեղիների, որոնք զանազան խաբեբայ հնարքներով արտօնութիւն են ձեռք բերել շարունակել իրենց առևտուրը մինչև գիշերուայ սարաժամ միջոցները: Շատերը դրանց տէրերից, ՚ի չարն գործ դնելով այդ իրաւունքը՝ դեռ անցեալ տարի զրկուեցան այդ իրաւունքից և այժմ էլ պարտաւորուած են փակել իրենց պոռնկատները սովորական ժամումը: Նոյնպէս ձայն կայ, որ մտադիր են պոռնկատները մայրաքաղաքի կենդրոնից տեղափոխելու դէպի շրջականները:

—

„Новости“-ին հաստատ աղբիւրներից հաղորդում են, որ Պետերբուրգի գիմնազիոնի մի քանի վարժապետների առաջարկութեամբ՝ առաջիկայ ձմեռ Պետերբուրգում կը բացուին փորձնական դասեր, ժողովրդական ուսումնարանների համար գործնականապէս վարժապետներ պատրաստելու նպատակով. այդտեղ կը հրաւիրուին նրանք, որոնք ցանկութիւն ունին ժողովրդական դպրոցներում ուսուցիչ լինելու, և ազգային լեզուով կը մատակարարուին այնպիսի տեղեկութիւններով, որը ժամանակով իրենց պաշտօնութեան ծրագիրն է կազմելու: Այդ գործի համար աշխատողները կարծում են, որ փորձնական դասերի հիմնելու ենթադրութիւնը կառավարութեան կողմից արգելքների չի հանդիպել, նամանաւանդ որ Կիեւ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՆԱՆ

Ենա՛, Այո, ընթերցող, փոքրիկ Ենան: Եթէ կամենում ես նրա ու նրա կեանքի մասին մի պարզ գաղափար կազմել, թողէնք, սրանք հեռու ու հեռու հիւսիս, դէպի Գերմանիա: Սակայն չը գիտեմ այս բոլորն ինչ տրամադրութեան մէջ ես, ինչ հոգեկան է զբաղուած քո միտքը: Եթէ կամիս, ազատութիւն տուր երևակայութեանդ, և ահա արդէն Գերմանիայումն ենք, ահա վերջապէս տեսնում ենք վերևից մի փոքրիկ քաղաք, նա շրջապատուած է անտառապատ լեռներով ու ծաղկազարդ հովիտներով: Նայիր, նրա ձախ կողմից անց է կենում այն փոքրիկ արծաթափայլ գետը, բայց դէպի ուր է հոսում նա, մենք չենք կարող այդ նկատել: Դա Զալա գետն է, բայց ինչու այս լեռների միջից անցնող գետը այնքան ծանր է հոսում, ինչ է պատահել նրան, միթէ նա դժուարանում է թողնել իւր հայրենիքը, այս կանաչազարդ հովիտները, մարգագետինները, անտառապատ լեռները, թողնել այդ լեռների դարևոր աշտարակները, այգիների ու անտառների փետրաւորների ճռուողին, թէ նրան մարդիկ են կանգնեցրել, որ իրենց գործարանները դարձնէ, որ հաց, հագուստ, թուղթ... պատրաստէ իրենց համար: Տեսնում ես այս փոքրիկ գետը քաղաքի մօտ ինչ մեծ դեր է ստացել, ինչպէս բարձր կարկաչիւնով վայր է թափւում իւրաքանչիւր քայլափոխում նոր-նոր ամբարտակներից ու հարիւրաւոր—հազարաւոր անիւներ է շրջում այդ գործարաններում: Այո, նա տեղ-տեղ կանգնում է, հանգստանում ու ոյժ է ժողովում, որ կրկին աւելի ուժեղ շառաչիւնով վայր հոսէ, աւելի արագ շարժէ անիւները: Ահա այն կողմ, կամրջի մօտ նրա վրայ սլանում են երիտասարդները փոքրիկ մակոյկներով. դրանք արհեստաւորներ, վաճառականներ, ուսանողներ են: Այն զոյգ-զոյգ նստողները սիրող սրտեր են, երիտասարդը ոգևորուած է, արագութեամբ առաջ է մղում մակոյկը, իսկ օրիորդը զմայլած է իւր սիրելու աշխոյժովն ու ոյժովը: Ահա այն ափից առանձին նաւակ նստեցին և օրիորդները, նրանք հանեցին ձեռնոցները ու քնքոյշ ձեռքերով սկսում են թիավարել: Տեսնում ես ինչպէս հպարտ են նստած, ինչպէս հմուտ են թիավարում, նրանք ոյժ են զգում իրենց մէջ՝ անկախ են: Մինը թիավարում է, միւսը՝ երգում, սակայն եթէ երգն էլ լսենք, կ՚ուշանանք, ժամանակներս կարճ է, շտապենք քաղաք: Անցնենք այս գեղեցիկ ծառուղիների ու այգիների միջից, մի երկու փողոց էլ՝ և ահա քաղաքի կենդրոնումն ենք: Այս հին տներով շրջապատուած հրապարակը քաղաքի վաճառատեղին է, նրա կենդրոնի այն փառաւոր արձանը համալսարանի հիմնադիր Կուրֆիւրստ Իօհան Ֆրիդրիխինն է: Նրա այդ զգեստը XVI դարու ձևն է կրում: Ինչ է նշանակում նրա աջ ձեռքում բարձրացրած այդ մեծ սուրը, և ձախ ձեռքի բռնած գիրքը: Գիրք ու սուր՝—լոյս և ոյժ:

Նայիր, հրապարակի արևմտքում այն հին աշտարակը քաղաքատան աշտարակն է: Տեսնում ես վերևը երաժշտական խումբը. նրանք շաբաթական երկու անգամ վերև են բարձրանում, երբ գիւղացիք քաղաքացիներին կերակրելու համար միս, կաթն, պանիր, եղ, կանաչեղէն...են բերում: Սպասենք մի քիչ, շուտով կը խփէ ինն ժամը և երաժշտութիւնը կ՚սկսուի:

Ահա այժմս ուշադրութիւն դարձրու աշտարակի մեծ ժամացոյցի վրայ: Տեսնում ես այնտեղ հրեշտակը ու նրա գլխի վերև մի խնձոր թելից կախ արած. ահա խփում է ժամը, խնձորը մօտենում է հրեշտակի բերանին, սա բաց է անում բերանը, իսկ խնձորը՝ ինչպիսի խորամանկութեամբ յետ է փախչում:

Այս 9 ժամերի քանակութեամբ պէտք է կրկնուի միևնոյն պատկերը: Այդ խնձորը հրեշտակի հետ այնպէս խաղ է անում, ինչպէս բաղդը՝ մարդու հետ. այդ տեսարանը ներկայացնում է մարդկային անյագելի ցանկութիւնն ու պատկերը: Ժողովրդի մէջ խառնուած ու թեթևի տուած այդ երիտասարդները ուսանողներ են, նրանք անհոգ ման են գալիս...:

Տեսնում ես այդ րէստորանի մեծ սենեակը ու դրա ներսի ու դուրսը ամբողջ գդակաւոր ուսանողները, դրանք „բուրշերն“ են: Բաց օդում երկար սեղանի շուրջը ինչպէս նստել են 25—30. ահա սկսեցին երգել ու խմել սիրելի գարեջուրը, այդ նրանց „նախագարեջուրն“ է, նրանք երէկ գիշեր մեծ քէֆ էին արել, այսօր առաւօտ վաղ մախմուրութիւններն են բացանում, իսկ որովհետև համարեա ամեն օր դրանք քէֆ են անում, ուստի համարեա ամեն առաւօտ ստիպուած են միևնոյնը կրկնել: Դեռ նոր սկսեցին, մի քիչ սպասենք, դուրս կը բերեն ընկերութեան դրօշակը և կը սկսեն երգելով շրջել սեղանի շուրջը, ՚ի հարկէ գարեջրի բաժակները ձեռքերին: Նախագահը ծիծաղաշարժ առակներ կ՚ասէ, հանաքներ կ՚անէ խեղճ սեղանի հետ ու բոլորը մին կը ծիծաղեն, մին կը խմեն: Դու հարցնում ես թէ այդ ինչ բամբակներ են, որ շատերը ճակատներին, քթերին, թշերին են կպցրել. դրանք մենամարտութեան թարմ վէրքերի նշաններն են: Սա ու սրա նման այսպէս անուանեալ „Բուրշէն շաֆթ“ ու „Կօրս“ ընկերութիւնները միմեանց ատում են. սրանք աւելի սաստիկ են ատում միւս ուսանողներին, չնչին պատճառ են սարքում, որ միմեանցից վեհ (!?) հանեն, կամ „Փուքսերն են“ („աղուէս“-ները, այսպէս են անուանւում առհասարակ ուս. ընկերութիւնների նոր ուսանողները), որ պարտաւոր են նշանակեալ ժամանակին միւս ընկերութեան փուքսերի հետ մենամարտութեան դուրս գալ, վէրք տալ, վէրք ստանալ, որ սրանց սպիները նշան լինեն նրանց անվեհերութեանն ու պատուասիրութեանը...բայց թողնենք այս պատուասէր երիտասարդներին ու անցնենք դէպի ծառուղին, որ շրջապատում է քաղաքի միջին մասը: Տեսնում ես այդ գլուխը քարշ արած արագ-արագ գնացող երիտասարդներին, դրանք աշխատասէր ուսանողներն են, իսկ նրանց ձեռքերը գրքերով ու տետրակներով լի պայուսակն է: Դրանցից իւրաքանչիւրը, ինչքան որ հարկ է համարում, դասախօսութիւնը լսելիս գրում է, տունը գրածը կրկնում է ու այսպէս կրկին յարդն մնում: Այդ ուսանողները գնում են դէպի այն հին տունը, դա համալսարանն է: Ներս մտնենք լսարանները, տեսնենք այն ամբիոնները, որտեղից Շիլլերն և Գեօթէն հիմակուայ պրոֆեսսորներին դասախօսութիւններ էին կարդում: Շտապենք, որովհետև եթէ ուշ ներս մտնենք, ուսանողները կ՚սկսեն ոտքերը յատակին քսել ու ընդհատել դասախօսութիւնը: Տեսնում ես այստեղ այն գոյնաւոր գդակաւորներից, որոնց թիւը քիչ չէ, շատ սակաւ են երևում, նրանք վում դրա նմանը հիմնուած է այդէն։

—

„Бак. Изв." հաղորդում է, որ այս տարուայ Բագուայ ռէալական դպրոցի VII դասատնից 28 աշակերտների թւումը գտնվում են 7 ռուս, 16 հայ, 2 Թուրք, 1 վրացի, 1 գերմանացի և 1 հրէայ. VI դասատնից վկայականներով դուրս եկան 24 հոգի.—15 ռուս և 9 հայ։ Առհասարակ, աւելացնում է թերթը, այս տարուայ աշակերտների թիւը անհամեմատ շատ է անցեալ տարուանից։

—

Ամսոյս 24-ին գիշերը, Երևանեան հրապարակի վրայ Ծուբինովի շինութենում գտնուած ժամագործ Բարինովիչի խանութից աւազակները գողացել են 200 րուբ. արժողութեամբ ժամացոյցներ։ Չարագործները քաղաքային ջրանցքների խողովակների միջով գնացել են մինչև յիշեալ խանութի տակը, և այդտեղ տան յատակի տախտակները ծակելով մտել են խանութը. բայց աւելի թանկագին իրեղէնները երկաթեայ սնդուկում փակուած լինելով, նրանք բաւականացել են վերը յիշածներով։ Գիշերուայ ժամը 12-ին դրան կից սենեակում բնակուող գինեվաճառ Սիտովի գործակատարը յիշեալ խանութում կասկածելի մարդկերանց ձայներ լսելով իմաց է տալիս խանութատիրոջը և ոստիկանութեանը, որին յաջողւում է մէկին միայն կալանաւորել. Թուրք կալանաւորը խոստովանում է իւր մեղքը։

—

Վարչական նպատակով Թիֆլիսի և Կօջորի մէջ շինուած է տելեֆոնի հաղորդակցութիւն։ Ապարատները դրւում են Թիֆլիսի կենդրոնական հիմնարկութիւններում, և Կօջորում—կառավարչապետի, նրա օգնականի և ուրիշ բարձրաստիճան վարչական անձինքների ամառանոցներում։ Տելեֆոնի գծի սիւները հեռագրական սիւների կարգով են կանգնած, բայց յետիններից շատ փոքր են։ Ասում են, որ տելեֆոնի սիւները տնկելուց յետոյ, Ծավկիսում գողացան ինչպէս սիւները, նոյնպէս էլ լարերը մի վերստաչափ տարածութեան վրայ, որից յետոյ վարչութիւնը ստիպուեցաւ նրանց նորից տնկելու, յայտնելով բնակիչներին սիւների նշանակութիւնը և նրանց ինչ նպատակի ծառայելը։ (Кавказъ).

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

„Նոր-Դար"-ի 87-րդ համարում պ. Մկրտիչ Զաքարեանցը իւր կողմից մի թեթև ակնարկ է աւելացնում մեր „Մի Դիտողութիւն" վերնագրով յօդուածին (Ն. Դ. 77)։ Չափազանց շնորհակալ եմ իմ հին ընկերակցի դարձած ուշադրութեան ու նրա մի քանի մտքերին, որ լրումն են տալիս մեր համառօտ դիտողութեան։ Միայն չգիտեմ պ. Զաքարեանը ինչու է այսպիսի հարցեր մէջ տեղ բերում իւր ակնարկի մէջ՝ „մի՞թէ մենք ունենք մասնագէտ երկրագործ ուսուցիչներ. մի՞թէ վստահ կարող ենք ասել որ մեր ուսուցիչները ծանօթ են գիւղատնտեսութեան որևէ ճիւղի հետ և աւելացնում է, այդ կէտերում պ. Կ. Մ. Շահնազարեանցի հետ համաձայնել շատ դժուար է։

Եթէ պ. Զաքարեանը մի քիչ ուշադրութեամբ կարդացած լինէր մեր „Մի Դիտողութիւնը" կարծում եմ այդ հարցերի պատասխանը այնտեղ կգտնէր և մեզ տեղիք չէր տայ կրկին մէջ բերել մեր յօդուածի այն կտորը, որին թէև բացատրութիւն տալով՝ երկարօրէն խօսում է իւր ակնարկի մէջ։

Ես մատնացոյց էի արել որ մեր այժմեան հանգամանքներում, գիւղացիներին առաջնորդելու, իրենց կենսական պահանջների արդիւնաբերութեանց մշակման հետ ծանօթացնելու ծառայութիւնը պիտի ծանրանայ գիւղական ուսուցչի վրայ, ինչպէս ասում է ինքը պ. Զաքարեանը և աւելացրել էի. „բայց մի պայման որ աչքի առաջ պիտի ունենայ այդ այն է՝ որ մեր դաւառական թէ գիւղական (չեմ ասում և քաղաքների) ուսուցիչների մեծ մասը շատ քիչ ծանօթութիւն ունի գիւղատնտեսութեան այս ճիւղերի հետ և ինչպէս յայտնի է, բացի լրագրական կցկտուր յօդուածներ ու մի երկու բրօշիւրներ մասնաւոր գրուածներ չկան, որոնցից օգուտ քաղէին նրանք, ուստի ցանկալի էր, որ գործին մօտիկ ծանօթ անձինք... գրքոյկներ հրատարակէին..."

Այստեղից կարծեմ շատ պարզ է, որ ես մասնագէտ երկրագործ ուսուցիչների վրայ մատնացոյց չեմ արել և ոչ էլ վստահաբար յայտնել որ նրանք ծանօթ են գիւղատնտեսութեան որ և է ճիւղի հետ այլ այն, որ նրանք կարօտ են գործին մօտիկ ծանօթ անձինքների օգնութեան և այդ օգնութիւնը պիտի կայանայ գիւղատնտեսութեան այլ և այլ ճիւղերի վերաբերեալ հրատարակութեանց մէջ։

Ապա մեր յարգելի ընկերակիցը մի տափակ առած է մէջ բերում. „պ. Կ. Շահնազարեանցը դեռ ևս ձին չառած՝ մսուրն (ախոռն) է պատրաստում, դեռ գիւղատնտեսութեան վերաբերեալ հեղինակութիւններ լոյս աշխարհ չեկած՝ տպագրութեան հոգսն է քաշում և ակնարկի վերջում, թող մասնագէտ գիւղատնտեսներ դուրս գան և նրանց աշխատութիւնները եթէ հրատ. ընկերութիւնները չեն տպագրել, այն ժամանակ պարբերական մամուլը կհրատարակէ"։ Ես չգիտեմ պ. Զաքարեանը ինչպէս կվերաբերէր հետևեալ յայտարարութեան. (Ն. Դ. 59) Պ. Վ. Ռոտինեանցը խնդրում է մեզ տպել. „Ի նըկատի ունենալով անտառների կոտորածը, տպագրում եմ մի գրքոյկ Պրակտիկական ու ժողովրդական Անտառապահութիւն և Անտառաբուծութիւն, որի համար երաշխաւորում եմ իմ սեպհական փորձերով... Դիտաւորութիւն ունիմ ձրի ուղարկելու մեր գիւղական ուսուցիչներին, որ նրանք կարդան և հասկացնեն հայ գիւղացուն, խնդրում եմ հայ երիտասարդներին բաժանորդ գրուել տպագրութեան ծախսերը հոգալու համար... բաժանորդագինն է 20 կոպէկ։

Արդեօք այսպիսի պայմանների մէջ, երբ մի հեղինակ, մի թարգմանիչ իւր չարաչար աշխատութեանց պտուղը ամենայն սիրով տալիս է հասարակութեան, մանաւանդ այնպիսի մի ճգնաժամում, երբ անտառների կոտորածը սաստկանում է և գիւղացին զրկւում իւր դաշտային պարապմունքների օգնականից, իւր ընտանիքի չոր հացին իւղ քսող, պանիր ու մածուն տըւող կով ու գոմէշից, պէտք է որ մուրացկանի պէս գլխէ երիտասարդներին նրանցից 20, 20 կոպէկ խնդրէ։

Արդեօք այդ վիճակը տեսած՝ մի հեղինակ, մի թարգման էլ գրիչ վեր կառնէ և այն գիւղատնտեսութեան չոր ու ցամաք ճիւղերի վրայ գրքոյկներ կգրէ՞, քանի որ համոզուած է որ իւր գրածը կամ ձեռագիր պիտի մնայ և կամ թէ հազար ու մի թուք ու մուր կլսելով մի քանի տասնեակ րուբլի պիտի ձեռք բերէ, որ տպագրութեան ծախքերը լցնէ։

Օտար ազգերի մէջ ով երկու տող բան է գրում, ոչ միայն բարոյապէս օժանդակւում են նրան՝ այլ և նիւթապէս առատ վարձատրում, բայց մեզանում, ամօթ մեզ, գրողին թուղթ ու թանաք էլ չենք տալիս, իսկ մի դատարկ խրախուսանքի փոխարէն շատ անգամ կայծակներ թափում գլխին։

Ահա մի ուրիշ յայտարարութիւն էլ, որ անցեալ տարուանից տպագրուած է գինեգործութիւն վերնագրով մի բրօշիւրի վերջում. „Յոյս ունենք որ մի քանի ժամանակից կհրատարակենք մի երիտասարդ գինեգործի աշխատանքը „Պրակտիկական գինեգործութիւն", որը մի մասնագիտական գրուածք կլինի, հիմնուած գիտնական սկզբունքների վրայ"։

Տարի է անցել և այդ գիրքը, որ մեր մէջ առաջին անգամը լոյս պիտի տեսնէր, ինչպէս և անտառապահութիւնը, դեռ չկայ։

Եթէ պ. Զաքարեանը նեղութիւն քաշէր իմանալ դրա պատճառը, չեմ կարծում որ բացի տպագրական ծախքի արգելքը մի ուրիշ պատասխան ստանար հեղինակից։ Եւ մի՞թէ այդ երկուսն են որ յիշեցի, ինչու չպէտք է կարծել, որ մի երրորդը, չորրորդն էլ նոյնպէս բաներ ունի գրած և միայն օգնութեան է սպասում լոյս աշխարհ հանելու։ Պետրովսկի ակադեմիայի հայ ուսանողները, որ այս վերջին տարիներս ռուսաց գրականութեան մի քանի գիւղատնտեսական գրուածներ շընորհեցին, արդեօք այդ պարոնները ուրախութեամբ նոյնը չէի՞ն անիլ իրենց հայրենակիցների համար, եթէ նրանց միջոց տային։

Եւ մի՞թէ քիչ բաներ կան թարգմանելու և այն մեծաւ մասամբ մեր կեանքին, մեր կուլտուրային համեմատ և մարդիկ կպակասե՞ն դրա համար։

Եւ երբ ես հեղինակի կամ թարգմանչի այսպիսի անել վիճակը տեսած աւելի հրատարակչական ընկերութեան (եթէ գոյութիւն ունի) պարտքն եմ համարում նրանց օգնել, քան թէ թողնել որ մուրացկանի պէս գլխէ սրան նրան, պէ՞տք էր որ պ. Զաքարեանը այս ասածը մէջ բերէր. „դեռ ձին չառած՝ մսուրն է պատրաստում, դեռ գիւղատնտեսութեան վերաբերեալ հեղինակութիւններ լոյս աշխարհ չեկած՝ տպագրութեան հոգսն է քաշում"։

Ձեր, պ. Զաքարեան, այն էլ թարգմանած ձեր ինչպէս տեսնում էք կգտնուէին և եթէ չգտնուէին էլ կարող էինք անել, բայց խոստովանեցէք որ առաջ ախոռ ու գարմանի հոգս պիտի քաշել որ մէջը կապենք ու կերակրենք, ապա թէ ոչ մեր ձին անախոռ ու անկերակուր կարող է սատկել...

Իսկ ինչ վերաբերում է այն մասին, թէ գիւղատնտեսական գրուածները եթէ հրատ. ընկերութիւններ չտպագրեն, պարբերական մամուլը կհրատարակէ, այդ շատ խրախուսիչ է։ Մեր մամուլը մի կատարեալ շտեմարան է, ուր ամեն հարցերի, ամեն խնդիրների համար կարելի է տեղ գտնել, բայց արդեօք այդ յարմարութիւնները ներկայացնում է պարբ. մամուլը, ինչ որ մի գիրք կամ մի բրօշիւր, որ առանձին է հրատարակւում. այդ թողնում եմ ձեզ դատելու։

Ոչ պակաս զարմանում ենք և պ. Զաքարեանի այսպիսի կասկածաւոր հարցմունքների վրայ. „մի՞թէ դաւառական ուսուցիչը իւր տեսականապէս ձեռք բերած գիտութիւնով կարող է օգնել և առաջնորդել հմուտ և փորձառու գիւղացուն գիւղատնտեսութեան մէջ (եթէ որ թէ այդպէս լինէր). չէ որ հակառակ դիպուածում, եթէ չկարողացաւ իւր վարկը ու համբաւը գիւղացու առաջ բոլորովին ընկած կլինի"։

Եթէ պ. Զաքարեանը համոզուած է ինչպէս ինքը գրում է, որ մեր գիւղացիների համար մի յոյս է մնում, դա դաւառական ուսուցիչն է, որ ամեն կերպով գործաւոր գիւղացիների հետ յարաբերութեան մէջ է, որը ճըշմարիտ ոյժ ունի գործելու և օգնելու գիւղացուն նրա գործի մէջ, չգիտենք էլ ինչ կասկած կայ։ Եւ ով ասում, որ մի անփորձ ուսուցիչ մի կենայ ու չիմացած բանի վրայ գիւղացուն խօսէ, նրան մոլորեցնէ, իրեն էլ խաղք խայտառակ շինէ նրա առաջ, խելքը հացի հետ խօ չի՞ կերել այնպիսին։

Փարատելով պ. Զաքարեանի ակնարկի մէջ անուշադրութիւնից սպրդած մի երկու թիւր դիտողութիւնները մեր յօ

միջոց չունին դասախօսութիւն լսելու, պարապած են..., բայց ահա դրանցից մի երկուսն էլ ներս մտան, սրանց հերթն է այս օր դասախօսութեանը ներկայ լինել, սրանք իրենց ուղարկող ընկերներից աշխատասէրներին պէտք է հաշիւ տան։ Նայիր պատուհանից, պրօֆէսսօրը գալիս է, կէս դար է, որ նա դասախօսութիւն է անում, շատ ծերացած է, այնպէս չէ՞, հազիւ ման է գալիս։ Ներս մտաւ։ Դղրդոց։ Ահա բարձրացաւ ամբիոն. նրա շունչը ընդհատւում է, կրկին ոգևորուեց, կրկին վառուեց նրա երիտասարդական սրտի ու հոգու հուրը...Այդ թխկթխկոցը որ լսեցիր պրօֆէսսօրի գալիս ու գնալիս՝ դա առանձին համակրութեան նշան էր, դրան քչերն են արժանանում։

Հիմայ գնանք այն կողմերը, ուր ուսանողներն են բնակւում, տեսնենք թէ այսօր նրանք ուրիշ ինչ տեսարաններ են ներկայացնում։ Ենան ուսանողների քաղաքն է, նա ապրում է սրանց համար. եթէ ուսանողները չը լինէին, Ենան մի աննշան գիւղաքաղաք կը լինէր։ Համալսարանը իւր պրօֆէսսօրներով և ուսանողներով կարծես ծածկում է իւր թևերի տակ քաղաքի կեանքը։ Հիմայ դեռ ուշադրութիւն դարձրու այդ տների պատուհանների տակ խփած թիթեղնեայ տախտակների արձանագրութիւնների վրայ։ Ինչ է գրած. Գեօթէ, Կլօպշտօկ, աջ կողմում՝ Հերդեր, Լութեր, Ֆեխտէ, այս փողոցում, — Շիլլեր, Հումբոլտ, Մելանխտօն, երկրորդում՝ Օկըն, Արնդ... Այս համբաւաւոր երևելի մարդկանց անուններից շատերին լսելիս, շատերի հեղինակութիւնները կամ նրանց աշխատութիւնները կարդացել ես. սրանք Ենայի հիւրերն էին կամ նրա զաւակները, սրանք լուսոյ ճառագայթներ էին սփռում աշխարհի չորս կողմը։ Քաղաքը ընդհանրապէս և ուսանողները մասնաւորապէս հպարտութեամբ արձանագրել են այդ երևելի անունները, դա նրանց միակ պարծանքն է։ Նրանք չունեն երևելի մուզէումներ, մեծ-մեծ թատրոններ, հարուստ գործարաններ. նրանք ունեցել են և ունեն միայն գիտութեան անդաստաններ ու ծաղիկներ։

Լսիր այս տխուր երգը, տեսնում ես այն դրան առաջ սև շորերով կանգնած երեխաներ են երգում, նրանք աղքատների որդիք են, ուսումնարանի աշակերտներն են, երգում են, որ հաց ու փող ստանան. մուրացկանութիւն են անում. խեղճե՛ր, արդեօք ինչ էք զգում այս րոպէիս... աշակերտամուրացկանութիւն։ Տխուր տպաւորութիւն է անում այս տեսարանը, այնպէս չէ՞։ Բայց հիմայ նայիր այս կողմ. ահա մի փառաւոր կառք, նրա մէջ ծանր ու լուրջ նստած են միջնադարեան փառաւոր զգեստով պապն ու նըրա կարդինալը. նրանց գլխին ակնեղէններով զարդարուած գդակներ։ Արքանից առաջը կարմիր շալերով նստողը փայլուն կացինը ձեռին, երկար մօրուքով դահիճն է։ Կառքը շալանակ այդպէս ծանր է շարժում, իսկ սրա յետևից փոստատանից վեր առած կառքերին ներսը իրար վրայ են լցուել այլ ուսանողները, նրանք ինչպէս երգում, գոռում, ծիծաղում են։ Ինչ են ներկայացնում, ում են ծաղրում, առաջի կառքում նստողներին։ Ահա և այդ ուսանողների դամփռների հաջոցը, երեխաների խառնիճաղանճ խումբը. ուռա. ուռա... հա՛, հա՛, հա՛... ինչ պակաս սիրական տեսարան է։ Ահա սրանց մօտից գլուխը քարշ արած անց է կենում պրօֆէսսօրը, իբրև թէ ոչինչ չէ տեսնում. միւս կողմից անցնում է պաստօրը, այն կողմից՝ դատաւորը. նրանք մտածում են. „երանի՜ ձեզ, քէֆ արէք, քանի ազատ էք"։ Եթէ մի քանի օր այստեղ մնայիր, ներկայ կը լինէիր շատ և շատ սոյն տեսակ տեսարանների։ Մին էլ տեսնես՝ կանաչ գդակաւորներից մի քանիսը գնեցին մի մեծ, կէս արշին տրամագիծ ունեցող ռեզինեայ գունդ, բարձրացան իրենց բնակարանի չորրորդ յարկը ու պատուհանից յանկարծ վայր ձգեցին ահագին գունդը պատուաւոր օրիորդների առաջ։ Սրանք երկիւղից վեր են թռչում, ուսանողները վերևից, անց ու դարձ անողներն ու երեխաները ներքևից մեծ ծիծաղ են բարձրացնում. ծիծաղում են և օրիորդները. Ե՛հ, ասում են նրանք, ոչինչ, մեր գիժ ուսանողներն են,... եթէ դրանցից մէկը մեզ մօտ պարկեշտ լինի, նրա ականջները կը քաշենք։ Միւսները պատուհանից փողեր են ձգում աղքատ երեխաներին, սրանք իրար վրայ լցւում, շորեր են պատառում։

Ահա խփեց ժամը 12, համալսարանից, ուսումնարաններից, գործարաններից, կրպակներից մեծ ու փոքր դուրս թափուեցին. տեսնում ես ինչ շարժում ստացաւ քաղաքը։ Բոլորը շտապում են ճաշի, բոլորի ժամանակը րոպէ առ րոպէ չափած է. եթէ վաղը այս մի և նոյն րոպէին այս անկիւնում կանգնես, կրկին ճիշտ միևնոյն անցորդներին կը տեսնես։

Նայիր այն կողմը, փոքր տղայք ու աղջիկները փայտեայ սայլերով են ման գալիս, նրանք կամենում են շուտով մեծանալ։ Հիմայ այս խաղի մօդան է. ամեն փողոցում միևնոյնը կը տեսնենք։

Գնանք դէպի ծառուղին։ Այս մասը „Ֆիլոսոֆենվեգ" է անուանւում։ Ահա, այստեղ ծառերի տակ ծաղիկներով շըրջապատուած են մի շարք կիսարձանները այն մեծ մարդկանց, որոնք գիտութեանն են ծառայել. նայիր աջ կողմը, բուսաբանական այգուն կից Գեօթէի բնակարաններից մինը։ Այստեղ նա անց էր կացնում իւր ուրախ օրերը ու ծիծաղում ուսանողների գժութիւնների վրայ։ Սրանից մի զոյգ առաջ Ենայի ուսանողը շատ կոպիտ էր, նա հագնում էր մի կարճ վերնազգեստ, կաշուէ անդրավարտիկ, ծանր մեծ դգակ ու ահագին կօշիկներ։ Դէ՛հ այսօր բաւական է, հանգստանանք։ Եթէ Ենային հաւանեցիր, նա քեզ հե [illegible], շուտով մի կիւրակի օր կգա. այդ օրը քաղաքի կեանքի բոլ ու տեսարանները փոխւում են. ծաղկ յետոյ, մանաւանդ ամառուան ժամանակ, համարեայ բոլոր քաղաքը դուրս է գնում դէպի այս լեռները, անտառները, այգիները։ Այնտեղ երաժշտութիւն, մի նոր տեսարան է ներկայացնում, նոր-նոր աշտարակներ, արձաններ, գիւղեր, քաղցր ջրեր ու գարեջրեր։ Այնտեղ մենք կը տեսնենք թէ ինչպէս ուսանողները պարում են գեղջկուհիների հետ։ Կը տեսնենք պրօֆէսսօրներին, իշխաններին, նստած մի նոյն ըէստօրանում ուսանողների, գիւղացիների, արհեստաւորների հետ, բոլորը գարեջուր են խմում, բոլորը զուարճանում։

Յ. Տ.—Մ.

22 (10) յունիս, Ենա.

ՄԻ ԱՆՑՔ

I.

Մի անգամ ես ճանապարհորդում էի Վարանդայ գաւառում (Ղարաբաղի հանգ). Մութը կոխած ժամանակ հասնելով Ն. գիւղը՝ իջևանեցի ընկերոջ դուածի դէմ, կրկնում եմ շնորհակալութիւնս պարոնին, որ առիթ տուեց մի երկու խօսք ես աւելացնել մեր հեղինակների վիճակի մասին։ Յոյս ունեմ որ մեր „Մի Դիտողութիւնը“ արձագանք կգտնէ և ուրիշների կողմից, որոնց սրտին մօտ է որ առաջ բացուած տեսնել գիւղացու շահերի հանգոյցները։

Ն. Կ. Մելիք-Շահնազարեանց.

Մանգլիս
20 Յունիսի

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Լօնդօնից գրում են „N. Fr. Presse“ լրագրին. „Կանանց իրաւունքների պաշտպանները չեն կարողանում համակերպել պատգամաւորների ժողովի նրանց գործին տուած հարուածների հետ։ Անցեալ չորեքշաբթի օր Սէն-Ջէմս-Հօլլում կանանց քաղաքական ազատութեան օգտին միտինգ կայացաւ, որտեղ բացառապէս կանայք էին մասնակցում։ Նախագահում էր Հարրէտ-Անդերսօնը, որը Անգլիոյ փոստային վարչութեան կառավարիչ՝ Ֆօսետտի աներքոյրն է։ Միսս Բեկկերի առաջարկութեամբ ժողովը ընդունեց այն վճռահատութիւնը թէ՝ պալատի առաջարկութիւնը ընտրողական փոփոխութեան վերաբերութեամբ կատարեալ չէ, եթէ նրանով դուրս են ձգվում այն կանայքը, որոնք պահանջեալ համարումն ունին, թէ ընտրողական բարեփոխութիւնը կարելի կը լինի կատարեալ ընդունել միայն այն ժամանակ՝ եթէ կանանց պահանջները օրէնքով ուշադրութեան կ'առնուին։ Միւս վճռահատութեան մէջ միտինգը յոյս է յայտնում, որ լորդերի պալատը, առաջարկութիւնը քննելու ժամանակ՝ պատեհութեամբ կը վերաբերուի դէպի կանանց իրաւացի պահանջները“։

—

„Daily Telegraph“-ի Կայիրոյի թղթակիցը հաղորդում է, որ խալիֆները և Վերին Եգիպտոսի միւս քրիստոնեաները խմբով թողնում են իրենց բնակութեան տեղերը և գաղթում են դէպի հիւսիս։ Անկասկած՝ այդ շարժումը առաջ է եկել երկիւղից, սակայն տեղական կառավարութեան վկայութեանը նայելով՝ քրիստոնեայ ազգաբնակութիւնը ոչ թէ երկիւղ է կրում ապստամբների ատելութիւնից, այլ Մահդիի մարդկերանցից դրդուած մահմեդականների յարձակմունքներից։ Խռովարարների յուզմունքը տարածուել է Վերին Եգիպտոսի ամբողջ տարածութեան վրայ, ուր տեղացիները համբերութիւնից դուրս են եկել չափազանց հարկահանութեան պատճառով։ Անգլօ-Եգիպտական կառավարութիւնը ոչ այնքան զբաղուած է խռովարարների յարձակմունքների առաջն առնելով, որքան որ միջոցներ է գործ դնում փէլլահների ապստամբութեան դէմ։

—

—Բ. Դուռը սուլթանից հրաման ստացաւ յունիսի 9 (21), որը լիազօրութիւն է տալիս կառավարութեանը արքունի պարտքերի պարտամուրհակները փոխանակելու և նուէրակներ նշանակելու այս միջոցները ի կատար ածելու համար։ Թիւրքական զօրքից երկու սպաներ հրաման ստացան Ճանապարհ ընկնել դէպի Ֆրանսիոյ ծովային մինիստրի պատուիրած տորպէդեան նաւակների կառուցման վրայ հսկելու։ Մինիստրների խորհրդի մէջ վճռուած է թոյլատրել բրիտանական թնդանօթանաւ „Komet“ նաւին Բասրից ուղղևորուել դէպի Բաղդադ։ Մինչև այժմ Դուռը մերժում էր թոյլատրել, չը նայելով լորդ Դիւֆֆերինի պնդելուն, որ անգլիական դեսպանը Բաղդադի մէջ իրաւունք ունի պահելու թնդանօթանաւ։ Հաւանական է որ սուլթանը կը համաձայնի մինիստրութեան վճռի հետ։

—

Անգլիական „Observer“ լրագիրը լիովին համաձայն է անգլօ-ֆրանսիական համաձայնութեան վերաբերութեամբ անգլիական մամուլի անբաւականութեան հետ։ Նրա ասելով՝ այդ համաձայնութեան պայմանները մինչև այն աստիճան վայր են ձգում Բրիտանիոյ հեղինակութիւնը Եգիպտոսում, որ պարլամենտի կատարեալ պարտականութիւնն է չ'ընդունել Ֆրանսիոյ հետ կայանալիք համաձայնութիւնը, առանց երկար խորհրդակցելու և երկիւղ կրելու այն հետևանքներից, որոնք կարող են ծագել ինչպէս Անգլիոյ, նոյնպէս և Եւրոպայի համար։

Անգլիական լրագիրների հաղորդածներին նայելով՝ բրիտանական կառավարութեան շրջաբերականները մեծ պետութիւններին ուղարկած են հեռագրով, իսկ պաշտօնապէս հրաւէրները կոնֆերէնցիային, յանձնուած են յունիսի 22-ին։ Անգլիական արտաքին գործերի մինիստրութիւնը նոյն թուով հաղորդել է մեծ պետութիւնների կառավարութիւններին ֆինանսական առաջարկութեան բովանդակութիւնը, որը Լօնդօնի մինիստրութիւնը պէտք է առաջարկէ կոնֆերէնցիային։ Այդ հաղորդութիւնը արուած է այն նպատակով, որ միջոց տրուի պետութիւններին վաղօրօք ծանօթանալու սպասելիք խորհրդակցութիւնների ծրագրի հետ, որպէս զի օտար պետութիւնները կարողանային ներկայանալ կոնֆերէնցիային, առաջարկած խնդրի վերաբերութեամբ որոշ հայեացքներով։ Լօնդօնի պաշտօնական շրջաններում կարծում են, որ կոնֆերէնցիայի պարապմունքները երկար չեն տևի։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

„Standard“-ին Թէհրանից հեռագրում են, որ Պարսից ծոցում գտնուող Կիշէմ կղզու վերայ մայիսի 9-ին խիստ երկրաշարժ է եղել։ Տասներկու գիւղ քանդուել և մօտ 200 հոգի սպանուել են։

⁂

Մի հին Ճշմարտութիւն. „Հայրիկ, դու մինչև պսակուելդ մայրիկին երկար ժամանակ Ճանաչում էիր.—„Ոչ որդեակս, նրան պսակուելուց յետոյ, շատ ուշ Ճանաչեցի։“

⁂

Մի քանի ժամանակից սկսած գիտնական Պաստէօրը աշխարհիս ամենաթշուառ մարդն է։ Հրատարակել էին, որ նա կատաղութեան դէմ միջոց է գտել, և այդ ժամանակից Փարիզի բոլոր ամուսինները նրա մօտ ուխտ են գնում։ Դրանք ուզում են իրենց զօքանչների մասին խորհուրդ հարցնել (L' Evénément)։

⁂

Ներկայացում խուլերի և համրերի ինստիտուտում. Օրերումս Լօնդօնում խուլերի և համրերի ինստիտուտում մի ներկայացումն տրուեցաւ, որտեղ 20 աշակերտներ երկու սեռից էլ դերասանների և դերասանուհիների պէս ձևեր էին անում։ Ներկայացմանը ներկայ եղողների մեծագոյն մասը համրեր և խուլեր էին. նրանց երեսների գծագրութիւնից երևում էր, որ այդ համր ներկայացումը նրանց շատ է հետաքրքրում։ Ներկայացումը շատ երկար տևեց, որովհետև խուլերի ու համրերի ձեռքերի շարժմունքները աւելի դանդաղ են լինում, քան թէ բառերի արտասանութիւնը։ Յուշարարը նոյնպէս խուլ և համր էր, և ամբողջ ներկայացումն անցաւ առանց ձայնի։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

22 Յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ապահովութեան վերաբերեալ կանոնադրութեան նախագիծը աշնանը կը ներկայացնուի պետական խորհրդին։

„Новое Время“-ն հաղորդում է, թէ Կախանովի յանձնաժողովի անդամների թիւումը ենթադրում են հրաւիրել Պերմի, Կիեվի և Վորոնեժի նահանգապետներին. Պենզենի, Տամբովի և Պսկովի ազնուականութեան նահանգական ներկայացուցիչներին. Ելեցկի, Սուգօդսկի և Բախմուտսկի գաւառական իշխաններին. Պետերբուրգի, Մոսկուայի և Րեազանի նահանգական հողային վարչութիւնների նախագահներին. Ալատիրի, Բեժեծի և Օստերի գաւառական վարչութիւնների նախագահներին։

«Օրէնսդրութեան հաւաքածուում» տպուած է պետական խորհրդի Բարձրագոյն հաստատած կարծիքը, որը վերաբերում է Արևելեան Սիբիրիոյ դպրոցների վրայ հսկողութիւնները աւելացնելուն։ Կարգադրուած է. Իրկուտսկի նահանգում ժողովրդական ուսումնարանների վրայ թեմական տեսուչ նշանակել. նոյնպէս կոչումի վերափոխել և Զաբայկալի նահանգի ժողովրդական ուսումնարանների տեսչութիւնը. Իրկուտսկում, Բոլօգովում և Վերխնեւեսում, Իրկուտեան նահանգի ժողովրդական ուսումնարանների տեսուչ նշանակել. Իրկուտսկի գաւառական ուսումնարանը փակել։ Նոյն հաւաքածուի մէջ տպուած են ուղղափառների հոգևոր Ճեմարանների կանոնադրութիւնը և շտատները, որոնց գործադրութիւնը առաջադրուած Ս. Սինոդին ձեռնարկելու առաջիկայ ուսումնական տարուայ սկզբից։

ԼՕՆԴՕՆ. Կոնֆերէնցիան՝ երևի երկուշաբթի նորից կը հաւաքուի, երբ Փարիզից կը վերադառնայ Վադդինգտօնը, որը կանչուած է այնտեղ լսելու ֆրանսիական մինիստրութեան կարծիքը, վերաբերեալ Եգիպտական պարտքի տոկոսների պակսեցնելուն։

ՓԱՐԻԶ. Դեպուտատների պալատը 414 ձայների մեծամասնութեամբ 113 դէմ ընդունեց սահմանադրութեան վերաքննութեան նախագիծը։

Գերմանական բժիշկ Կօխը երէկ ճանապարհ ընկաւ Տուլօն, ժանտախտը հետազօտելու համար։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

22 Յունիսի

Լօնդօն—$24^{1}/_{8}$ $24^{7}/_{32}$։ Համբուրգ—206, $206^{3}/_{4}$։ Փարիզ—$254^{1}/_{4}$, $255^{1}/_{2}$։ Պօլուիմպերիալը—8 ր. 20 կ. Արծաթը—1 ր. 33 կ.։ Պետական բանկի 5% տոմսեր.—1-ին շրջանի—$97^{3}/_{4}$ ր. ծախ., 2-րդ 96 ր. 12 կ. ծախ., 3-րդ—96 ր. ծախ., 4-րդ—95 ր. 87 կ. ծախ., 5-րդ—96 ր։ Արևել. փոխառութեան 100 և 1000 ր. 5% տոմսեր. 1-ին շրջանի—93 ր., 2-րդ—93 ր., 3-րդ—93 ր. 12 կ.։ Վիճակահանութ. տարած 5% տոմսեր՝ 1-ին շրջանի—221 ր., 2-րդ—$209^{3}/_{4}$ ր.։ Նոր փոխառութիւնը—$139^{1}/_{4}$ ր.։ Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է։

23 Յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Տեղւոյս քաղաքային դուման իւր երէկուայ շտապողական նստում վճռեց՝ քննու-

---

հետ միասին տանուտէր Կարապետի տանը։ Ընթրիքից յետ տանուտէրի հետ միասին մի փոքր հեռացանք տան բակից և զբօսնում էինք նրա այգիում։ Գեղեցիկ լուսնկայ գիշեր էր, և մեր զբօսարանից մենք պարզ տեսնում էինք գիւղացիներից շատերին, որոնք պառկոտած էին իրենց տների բակերում և խռմփալով քնում էին։ Մի քանի քայլ հեռու գտնվում էր Միքայէլի տունը։ Նա էլ իւր բակում, լուսնի առաջ հանգչում էր՝ ընդգրկած իւր սիրելի Հերիքնազին։ Նրանք այնպիսի խոր քնի մէջ էին, որ եթէ երկրի խորտակում լինէր՝ ամենևին արթնութիւն չէին զգայ։

Այս միջոցին, նրանց մօտիկ մի ուրիշ անկողնից, կարծես կայծակնահար եղած, մի անթարթում քնաթաթախ վեր թռաւ մի կին, մի բուռն զայրացած դէմքը ուղղեց դէպի լուսինը և ապա դէպի հարևան անկողինը նայելով ծածկեց ձեռքերով իւր երեսը և սկսաւ հեկեկալով լաց լինել։

Գիւղացի կնոջ այս յանկարծահաս կոծը անշուշտ ամեն մի տեսողին կը հետաքրքրէր. ես էլ ազատ չը մնացի այդ հետաքրքրութիւնից և իմ հիւրընկալից հարցրի նրա լացի պատճառը։

Տանուտէրը համառօտ պատմեց որ լացող կինը՝ Մարիամը Միքայէլի կինն էր։ Սրանք տասն և եօթը տարի միասին օրինաւոր ամուսնական կեանք էին վարել և ունեցել են երեխաներ։

Այժմ Միքայէլը պահում է իւր մօտ մի ուրիշ ապօրէն կնիկ և Մարիամին խսպառ հեռացրել է։ Խեղճ կնոջ լացը այս ցաւի համար է, որը և կրկնվում է գրեթէ ամեն օր և գիշեր։ Ես չափից դուրս զգացուեցայ և էլ երկար սպասել չը կարողանալով՝ քաշեցի ինձ հետ ընկերներիս և մենք միասին մօտեցանք լացող կնոջը։ Նա այդ ժամանակ շուտ ելած և անկողնի մէջ նստած մրմնջալով օրօրում էր օրօրոցում կապկապած փոքրիկ երեխային։ Ես առաջ անցնելով կամացուկ հարցրի նրան.

—Քոյրիկ, ինչ է պատահել քեզ, ինչու համար ես լաց լինում։

Նա իսկոյն ամօթխածութիւնը մի կողմը թողած՝ յուսահատ և լացից խեղդուող ձայնով սկսաւ պատմել իւր ցաւը։

—Տեսէ՛ք, սա իմ ամուսինն է, որ այն անկողնի մէջ քնած է։

Ես նրա հետ 17 տարի ամուսնական կեանք եմ վարել. այսքան ժամանակի մէջ նա մի ամենաաննշան անհաւատարմութիւն և մեղք չէ նկատել իմ մէջ, բայց գնացել և ապօրէն կին է բերել...

—Ո՞ւր է այն կինը։

—Նայեցէ՛ք, նա անկողնի մէջ՝ ձեռքը ամուսնուս փաթաթած՝ քնած է։

—Ո՞ր գիւղից է նա, ո՞վ է պահել նրան, կամ ինչ իրաւունքով է եկած այստեղ։

—Նա մեր գիւղացի մի կոյս աղջիկ էր։ Նրա հայրը մի զոյգ եզ առնելով իմ ամուսնուց, տուեց նրան իւր աղջիկը։

—Ինչ պատճառաւ և ինչպէ՞ս սկսուած։

—Չը գիտեմ. ես ոչինչ չը գիտեմ։

Միքայէլը մի օր ճաշի ժամանակ յանկարծ խօսք բացաւ, թէ Մարտիրոսենց Սարգիսը մի կին է առել (իւր կինը կենդանի), ես էլ եմ մէկն առնելու։ Մահուան սարսափը ինձ տիրեց և մի սարսուռ պատեց ամբողջ մարմինս այս անակընկալ խօսքը լսելով. ես կամեցայ հարցնել պատճառը, բայց փոխանակ խօսքիս պատասխան տալու նա կողքիս մի այնպիսի հարուած տուաւ իւր ձեռքի փայտով, որից ես ընկայ ուշաթափ։ Երկար ժամանակ ես էլ ոչինչ չէի զգում։ Բայց յետոյ երեխաներիս ճիչն ու աղաղակը ինձ մի փոքր ուշքի բերեցին. ես կամենում էի տեղիցս վեր բարձրանալ, բայց կողքիս կսկիծը ինձ քաշում էր։ Իմ ամուսինը դեռ չը բաւականացած այս հարուածով, կատաղաբար սպառնում էր ինձ, որ ես այսուհետև չը համարձակուեմ նրա առաջ ծպտալ։ Ամեն բան պարզուեց. նա աղջկն խօսք էր տուել պսակուել։ Երկու օրից յետոյ ես նստած էի գործիս. նա գնացել էր յանդ. երեկոյեան վերադարձաւ տուն այն աղջկայ և ուրիշ երկու մարդկանց հետ։ Ես իսկոյն հասկացայ, որ երկու մարդիկը աղջկայ բարեկամներն էին, որոնք բերել էին նրան ամուսնուս յանձնելու համար։ Փայտի հարուածի կսկիծը դեռ կողքիս մէջն էր. ես կամենում էի պաշտպանել իմ ամուսնական իրաւունքը, բայց որ յանկարծ կողքս մրմնջում էր, լեզուս կապվում էր...

—Մի՞թէ այստեղ սովորութիւն է, որ ամուսինը իւր կնոջ կենդանութեան ժամանակ մի կին էլ է առնում։

—Այո, այդ Աստուծոյ պատիժ սովորութիւնը այս կողմերը տարածուել է. այժմ ով իւր կնոջ վրայ մի քիչ բարկանում է, կամ կինը զաւակ չի ծնում, մի ուրիշն է առնում։

—Դու նրանից ծնուած երեխայ ունի՞ս։

—Երկու տղայ և մի աղջիկ, որոնք ինձ մօտ են կենում այս փոքրիկ սենեակում։ Խեղճ երեխաները սարսափելով են նայում իրենց հարազատ հօր վրայ, երբ նրա արարքը հասկանալով և նրանից զզուելով. իսկ հայրը ամեն բոպէ պատրաստ է նրանց պատառոտելու։

—Այժմ այն աղջիկը բերելուց յետ ինչպէ՞ս է վարվում քեզ հետ ամուսինդ կամ նոյն այդ նոր բերած աղջիկը։

—Օ՜հ, երկուսն էլ ինձ չարաչար հալածում են...

—Ինչու չես բողոքում։

—Բողոքե՛լ, ում բողոքեմ. ումն եմ ճանաչում. ով է իմ պաշտպանը, մանաւանդ երբ բողոքելու անունն եմ տալիս, սրանք երկուսով՝ այր և կին գլխիս են թափվում և այնքան ծեծում որ հազար անգամ անիծում եմ ինձ բողոքի անուն տալուս համար։ Եւ վերջապէս մի մարդ կա՞յ աշխարհում որ մեզ նման թշուառների լացն ու բողոքը լսէ...գոնէ ինձ իրաւունք տային հեռանալ այս գազան մարդուց... այդ էլ ասում են անկարելի է։ Այժմ ո՞ւր դիմեմ և ո՞ր ջուրն ընկնեմ...

Վերջին խօսքերի հետ ողորմելի կինը սկսաւ աւելի սաստիկ հեկեկալով լալ։ Նրա ձայնի վրայ երևի քնածներից մէկը զարթեցաւ։ Անկողնի մէջ շարժում տեսնելով մենք շտապաւ սիրտ տուինք խեղճ կնոջը և նրան յոյսերով խրախուսելով՝ տխուր տպաւորութեան ներքոյ արագ բաժանուեցինք նրանից և ուղղուեցի տուն հանգստանալու։

Լուսինը արդէն մայր էր մտել. գարնանային կարճ գիշերը լուսանալու վրայ էր, բայց դեռ գիշերային լռութիւնը տիրում էր։ Այն տունը, ուր մենք գիշերում էինք, գտնվում էր գիւղի ներքին թաղում. իսկ այն տունը, ուր մենք հանդիպեցինք Թագուհուն, (այս էր թշուառ կնոջ անունը) մեզանից քիչ հեռու, գիւղից ներքև ընկած ձորակումն էր գտնվում։ Ես պառկած էի, բայց աչքերիս քուն չէր գալիս. ազդեցիկ անցքը խանգարել էր քունս։ Յանկարծ մի սարսափելի խանչոցի ձայն ականջիս դիպաւ, ես դուրս թռայ տեղիցս և մօտեցայ Միքայէլի տանը։

թեան տակ ձգել՝ քաղաքային վարկային ընկերութեան գործերին վերաբերեալ յայտարարութիւնը. իսկ այն հարցը՝ թէ ինչ կերպով պիտի կատարուի այդ կարգադրութիւնը՝ կը վճռուի հետևեալ շաբաթական նստում:

ՓԱՐԻԶ. Առողջապահական խորհրդակցական մասնաժողովը հաւանութիւն տուեց յուլիսի 7 ազգային տօնախմբութեան յետաձգուելուն, որպէս զի չեզոք լինի այն վտանգներից, որոնք կարող են առաջանալ ժողովրդեան խուռն բազմութեամբ հաւաքուելուց:

ՀՕՆԿՕՆԳ. Չինացւոց հաղորդածներին նայելով՝ Ֆրանսիացիները պահանջել են, որ Լանգսօնը անյապաղ անձնատուր լինի. սակայն բերդապահները պատուէր չ'ունենալով՝ բացասական պատասխան տուեցին. Ֆրանսիացիները բերդապահներին երեք օր ժամանակ տուին, բայց յետոյ յարձակուեցին նրանց վրայ, սակայն ջարդ կրեցին և նշանաւոր կորուստ ունեցան, որի թւումը և հինգ Ֆրանսիական օֆիցերներ գերի տարուեցան:

24 Յունիսի.

ՎԻԼՆՕ. Տօտլեբէնի մարմինը կը բերուի այստեղ յունիսի 27-ին, յետոյ կ'ուղարկուի հանգուցեալի Կեյգանի կալուածը:

ՕԴԵՍՍԱ. Երէկ ժամանեց այստեղ «Ցարիցա» շոգենաւը 3 հազար հակը թէյ բեռնով: Շոգենաւը Խանկոյից մինչև Օդեսսա եկել է 37 օրում. այդ շոգենաւով բերուած են նոյնպէս թէյի մացառներ, Սուխումում բուսացնելու փորձեր անելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչը երէկ ճանապարհ ընկաւ Վիլնայի նահանգը, տեղական զօրքերը դիտելու:

Բարձրագոյն անուանը տւած խնդիրները ընդունող կանցելարեան յունիսի 26-ից բանում է իւր գործունէութիւնը. այդ կանցելարիայի կառավարիչ նշանակուել է սենատական խորհրդի, օրէնսդրական մասնի աւագ աստիճանաւոր Մամոնտովը:

ՄՈՍԿՈՒԱ. Յունիսի 6-ին տեղւոյս նահանգական դատարանում կը քննուի թունաւորիչների խմբի գործը. մեղադրուողները հինգ հոգի են:

ՎԱՐՇԱՎԱ. Առայժմս հաւաքած տեղեկութիւններից երևում է, որ հեղեղների պատճառած վնասները շատ մեծ են. նամանաւանդ մեծ վնասներ են կրել Վարշաւի, Ռադոմսկի, Լիւբլենսկի, Կելեցկի, Պլոցկի և Սեդլեցկի նահանգները, ուր միմիայն գիւղացիների վնասները գրեթէ հասնում են $2^{1}/_{2}$ միլլիօն րուբլու. հողատէրերի կրած վնասի մասին առայժմս այսքանը յայտնի է, որ Ռադոմսկի նահանգում նրանց կրած վնասը հասնում է երկու հարիւր հազար րուբլու:

ՎԱՇԻՆԳՏՕՆ. Միացեալ Նահանգների Վիէննայի դեսպան Տիֆտը տեղափոխուած է Պետերբուրգ:

ՓԱՐԻԶ. Կառավարութիւնը վճռել է ազատութիւն շնորհել բոլոր այն անիշխանականներին, որոնք Մօնսօ-լե-Մինում անկարգութիւններ էին արել, բացի Կրապոտկինից և Լուիզա Միշելից:

Առողջապահական դրութիւնը Փարիզում բաւականացուցիչ է:

Երէկ Տուլօնում խոլերայից 4 մահուան դէպքեր եղան, իսկ Մարսէլում—9:

ԼՕՆԴՕՆ. Հնդկաստանից ստացած տեղեկութիւններին նայելով՝ Աւղանստանի սահմանները որոշելու համար վերջնականապէս անգլօ-ռուսական յանձնաժողով է նշանակուած. մնում է միայն մի քանի մանրամասնութիւնների վերաբերմամբ պայմանաւորուել: Ասում են, որ Աւղանիստանի էմիրը համակրութեամբ է վերաբերվում դէպի յանձնաժողովը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. „Нов. Вр."-ն հաղորդում է, որ զանազան վարչութիւնների անդամներից յանձնաժողով է կազմուած, մի քանի հարցեր քննելու համար, որոնք կապ ունին նաւթային արդիւնաբերութիւնը կարգաւորելու հետ:

25 Յունիսի

ԽԱՐԿՈՎ. Խարկովի նահանգի հարաւային գաւառներում բաւականին տարածուած է հացի բզէզ. խոտերը հնձելու պատճառով բզէզը թռչում և նստում է հասկերի վրայ. նա փչացնում է և ճանկընդեղը, իսկ ընդհանրապէս հացի դրութիւնը շատ լաւ է և շուտով կ'սկսեն ժողովել:

ՎԻԼՆՕ. Հարց է բարձրացել գրաֆ Տօտլեբէնի թաղման տեղը որոշելու Ռիգայում, Պետերբուրգում կամ Հէյգանախում:

ՓԱՐԻԶ. Մինիստրների խորհուրդը հրամանագրել է դեսպան Տատեօրին՝ Չինաստանից վարձատրութիւն պահանջել Տեանտցզինեան դաշնադրութիւնը քանդելու համար: Փարիզում ստացուեցաւ չինական բարձրագոյն խորհրդի վաւերացրած Տեանտցզինեան դաշնադրութիւնը:

ԲԵՐԼԻՆ. Այսօր Բերլինով գրաֆ Տօտլեբէնի մարմինը Ռուսաստան անցկացրին:

ՏՈՒԼՕՆ. Կիւրակի օրը խոլերայից մեռան չորս հոգի, իսկ Մարսէլում—ինը, երէկ գիշեր—16 և այսօր—մէկը. ամբողջ գիշերը հիւանդանոցում ընդունուած են 20 խոլերայով հիւանդներ. Մարսէլում կասկածաւոր նաւերի համար առանձին նաւահանգիստ է հիմնուած. այնտեղ արդէն տարուած է սպանական նաւը, որի մէջ խոլերայով հիւանդ երևեցաւ:

ԿԱՅԻՐՕ. Դօնգօլայի մուդիրը հաղորդում է, որ յունիսի վերջերում 13 հազար ապստամբներ շրջապատեցին Դեբբան, բայց յամառութեամբ պատերազմելուց յետոյ ջարդ կրեցին. երկու կողմից էլ կորուստը մեծ է:

Անզգայ կանգնած նայում էի երկու պատի միջավայրից, և, Աստուած իմ, ինչ սոսկալի տեսարան էր ներկայանում իմ առաջ. Միքայէլը ձեռքին բռնած երկայնի դաշոյնով խփել էր անմեղ Թագուհւոյ գլխին. Ղարաբաղի գաւառացի կնոջ գլխի գոյնզգոյն փաթաթները ներկուել էին արիւնով. Թագուհին ամբողջ մարմնով արիւնով ողողուած՝ արիւնաթաթախ ձեռքերով բռնել էր սրի բերանից և վերջին շնչի մէջ աղաչում էր ամուսնուն բաւականալ այն հարուածով և առաւել չարաչար չը սպանել իրան. Հերիքնազն էլ մի կողմից քաշկռտելով նրա արիւնոտ մազերից՝ դէպի գետին էր գլորում. Գլխի հարուածը մի անգամից չէր սպանում Թագուհուն, գազան կտրած Միքայէլը խրեց դաշոյնը թշուառ կնոջ փորը և արագ պատռելով՝ ձեռքը դուրս թափեց նրա աղիքները... Զոհը անշնչացած գլորուեցաւ գետին. Երկու մարդասպանները խոյոն ջորու վերայ բարձած Թագուհւոյ դիակը՝ հանեցին գիւղից դուրս և տարան ձորակի միջով. Սարսափ և սոսկում տիրել էր ինձ և համրացրել լեզուս. այս դրութեան մէջ ես երերալով յետ դարձայ տեղս առանց ձայն ծպտուն հանելու. Առաւօտը շատ վաղ մենք հեռացանք գիւղից:

II

1879 թւին էր. այս անցքից ուղիղ երեք տարի յետոյ, ես մի օր անցնում էի քաղաքի շուկայից դէպի իմ բնակարանը, դատարանի սանդուղքներից տեսի իջեցնելիս երկու շղթայակապ կալներ. զինուորները հրացաններն ուսերին առած՝ պատել էին երկու մեղապարտների շուրջը. ես մօտեցայ նրանց և իսկոյն ճանաչեցի. նրանք Միքայէլն և Հերիքնազն էին: Հարց ու փորձ անել անկարելի էր, որովհետև պահապանը դրսի մարդկանց հետ խօսող մեղապարտին հրացանի կոթով հարուածում էր. իսկ ինձ համար առանց հարցուփորձի էլ պարզ էր նրանց բերելու շարժառիթը:

Երկու միահասակ դեռահաս երեխաներ մեղապարտներից տասը քայլաչափ հեռաւորութեան վրայ կանգնած՝ դիտում էին նրանց և լալիս: Նրանց մայրը չկար, հայրը այսօրէն կնոջ հետ միասին դատարանի վճռով մինչև իրենց կեանքի վախճանը դատապարտուած էին Սիբիրիայի մէջ, դաժանակիր աշխատանքների: Ինչ պէտք է անէին այսուհետև այդ երեխաները, ով պիտի նրանց կերակրէր... և խնամէր. ես ոչինչ չկարողացայ իմանալ. բայց իմ կարծիքով աւելի լաւ էր նրանց համար մեռնել քան մայրասպան հօր հացովը սնանել:

Մարդկային և բնութեան օրէնքը սրբապղծողներին այս պատիժը դեռ քիչ էր: Մի քանի օրից մարդասպաններն ճանապարհուեցան ասով դէպի իրանց աքսորատեղին....:

Բայց մեր ժողովուրդը դեռ խրատ չ'առաւ այս և սրա նման աղետալի անցքերից: Նա դեռ թոյլ է տալիս որ իւր մէջ աճէ այսօրէն կնապահութեան զարշելի սովորութիւնը: Մանաւանդ գիւղական ռամիկ դասի մէջ, այդ ախտը սարսափելի կերպով օր ըստ օրէ տարածվում: Ով պէտք է հոգայ այդ ամենի համար և բուժէ ժողովուրդը այդ ժանտացաւից—չգիտենք...

Վարանդեցի

Խմբագիր—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տ. Փաշայեան Տէր-Գրիգորեան և ա. Տէր-Գրիգորեան ուղևորուեցան Ալեքսանդրապօլից Ալէքսանդրապօլ հայերէն ներկայացումներ տալու համար: Նամակները ու հեռագրերը ուղարկել հետևեալ հասցէով:

АЛЕКСАНДРОПОЛЬ
Артисту Теръ-Григоріанцу
3—1

Սանդալ
„ՎԻՃԱԿ"
(Պատկեր Տաճկա—հայ պանդուխտ մշակների կեանքից)
Գինն է 40 կոպ.

Հրատարակութիւն Սարգիսբէկեանի.

Տփխիսում վաճառվում է—Կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում, Շահվերդեանի պավիլիօնում և Շահինեանի ծխախոտի մագազինում,

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով.

Тифлисъ, Головинскій проспектъ, домъ Ананова кв. 30, Софія Петросянъ.
2—1

ՓԻՐԱԼԵԱՆՑԻ և ԵՂԲԱՅՐՔ ՍՈՒՔԻԱՍԵԱՆՑՆԵՐԻ ԾԽԱԽՈՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳԱՆՁԱԿՈՒՄ.

Կարճ միջոցում կստացուի Փիրալեանցի գործարանից ծխախոտներ զանազան տեսակներից. գումարով առնողներին զեղջում կարելի է անել Գանձակում այնքան, ինչքան կ'ստանան Թիֆլիսում. օտարաքաղաքից կարող են դիմել. (Елисаветполь, торговля брат. Сукіасянцъ.) միևնոյն տեղն կարելի է գտնել ամենայն տեսակ ապրանքներ ամենաարժան գներով:
1—1

ԷԼԻ ՄԷԿ ԶՈՀ
ԿՈՄԷԴԻԱ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ
Հեղինակութիւն
Գաբրիէլ Սունդուկեանցի
գինն է 1 րուբլի.
Վաճառվում է Թիֆլիսում Կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում:

ԱՄԱՌՈՒԱՅ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻՆ ձեռնտու և հաստատ պայմաններով պատրաստում եմ աշակերտներ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ մինչև չորրորդ դասատան համար:

ԳԻՇԵՐՕԹԻԿ ևս կարելի է ընդունել: Հասցէն՝ Գալլերէա Արծրունի, № 148.
10—7

Ամենապատիւ Սրբազան Տեղակալի հրամանով առաջիկայ 1884—1885 ուսումնական տարուայ սկզբին Գէորգեան ճեմարանի վեցերորդ դասատան և առաջին լսարանի մէջ կընդունուին տասն տասն գիշերօթիկ աշակերտներ. իսկ միւս դասարաններում իսպառ ընդունելութիւն չի լինի:

Այս մասին պատիւ ունիմ յայտնելու բոլոր խնդրատուներին Արարատ ամսագրի և միւս լրագիրների միջոցով:

Տեսուչ ճեմարանի՝ Ա. Նահապետեան: 3—3.

Въ училищѣ
Е. КОВВАЧЪ
(Грибоѣдовская улица, № 16, противъ Приказа) съ 15-го іюня начинаются классныя занятія, подготовляютъ къ экзаменамъ и переэкзаменовкамъ; принимаются и пансіонеры.
8—7

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յայտարարում է ի գիտութիւն ընդհանուրին, որ այս յունիսի 27-ին, առաւօտեան ժամը 12-ին, նրա ներկայութեամբ, նշանակուած են աճուրդ կապալով տալու համար Հաւլաբարի կալուածքում գտնուած երկու կտոր քաղաքային գետին, մէկը 1890 դեսեատին 2040 քառակ. սաժէն տարածութիւնով, իսկ միւսը—257 դեսեատին, անասունների արածելու, երկրագործութեան և այլ գիւղատնտեսական պարապմունքների համար, երեք տարի ժամանակով: Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագրութիւնը Քաղ. Վարչութեան դրասենեակում, առաւօտեան ժամի 8-ից մինչև 1 ժամը:
3—2



ԱԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ.

«ԹԻՖԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ ԳՆԱՑՔՆԵՐԻ ԳՆԱԼԸ ԵՒ ԳԱԼԸ

Փոստան գնում է Բաթում առաւօտեան	8 ժ.	31 րոպէին
" գալիս է Բաթումից գիշերուայ	10 "	25 "
Ուղևորների և ապրանքների գնացքը գնում է Բագու առաւօտ.	10 "	45 "
Բագուից գալիս է կէսօրուայ	2 "	30 "

Շաբաթը մի անգամ ուղևորների և ապրանքների գնացքի փոխարէն լինում ուղևորների արագ գնացքը.

Բագու գնում է երեքշաբթի երեկոյեան	10 "	58 րոպ.
Բագուից գալիս է ուրբաթ առաւօտեան	7 "	53 "

Թիֆլիսի և Սուրամի մէջ

Թիֆլիսից ուղևորների և ապրանքների գնացքը գնում է ցերեկ.	3 "	11 "
Սուրամից " " գալիս է առաւօտեան	8 "	" "

Дозволено цензурою. Тифлисъ, 26-го Іюня 1884 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д. № 12.